ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 29.01/80
29.01.2015 թ.

Վանաձոր համայնքի ղեկավար
Սամվել Դարբինյանին

Պատճենը՝ Վանաձոր համայնքի ավագանուն

Հարգելի պարոն Դարբինյան,

Կազմակերպության 2015թ. հունվարի 23-ի թիվ 54 գրությանն ի հավելումն ներկայացվում է Վանաձոր համայնքի ավագանու՝ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացվելիք ուղերձի նախագիծը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268

նախագիծ

Վանաձոր համայնքի ավագանու

ուղերձը

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին

Հարգելի պարոն գլխավոր դատախազ,

Հաշվի առնելով Վանաձոր համայնքի թվով 452 բնակիչների դիմումները և պահանջը, ինչպես նաև 2014թ. հունվարի 12-ին Գյումրի քաղաքում ռուսական ռազմաբազայի զինծառայողի կողմից Ավետիսյանների ընտանիքի սպանության գործի հանրային հնչեղությունն ու ուշադրությունը, սույն ուղերձով դիմում ենք Ձեզ, որպես ՀՀ գլխավոր դատախազ պաշտոնական գրությամբ դիմել Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազին՝ Ավետիսյանների ընտանքի սպանության մեջ մեղադրվող Վալերի Պերմյակովին ՀՀ իրավապահ մարմինների հսկողությանը հանձնելու պահանջով: